ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ (1918–1919 թթ.)

ՆԻԿՈ ՋԱՎԱԽԻՇՎԻԼԻ (Թբիլիսի)

1917 թ. Ռուսաստանում զարգացող իրադարձությունները պայմանավորեցին պետական բանկից ծայրագավառներ, այդ թվում նաև Անդրկովկաս, կանխիկ թղթադրամների փոխանցման նվազեցումն, ապա, ընդհանրապես, դրանց գադարեցումը:

Դրամական նշանների պահանջարկի փոխհատուցման նպատակով Անդրկովկասի երկրամասային կառավարությունը՝ Անդրկովկասյան կոմիսարիատը, ժամանակավոր դրամական նշանների՝ բոնների թողարկման մասին որոշում ընդունեց: Շրջանառության մեջ դրվեցին 1, 3, 5, 10, 50, 100 և 250 ռուբլու արժողության բոնի թղթադրամներ:

Անդրկովկասյան կոմիսարիատի բոնների նախագիծը մշակել էր հայ ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքելովը: Այդ բոները իրենց բովանդակությամբ և արտաքին տեսքով սինթեզված էին և համաանդրկովկասյան բնույթ էին կրում: Դրանցից յուրաքանչյուրի վրա դրոշմված էր Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ, վրաց հայտնի սոցիալ-դեմոկրատ և պետական դործիչ Եվդենի Գեդեճկորու և ֆինանսների կոմիսար, հայ քաղաքական դործիչ Քրիստափոր Կարճիկյանի ստորագրության ֆաքսիմիլեն:

Բոները տպագրվում էին Թբիլիսիում, Ազատության հրապարակի վրա գտնվող Կովկասյան բանակի օկրուգային շտաբի նախկին շենքում տեղակայված դրամահատման առաքաբաժնում: Դրանց հատումը անփոփոխ շարունակվեց Անդրկովկասյան Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության գոյության ողջ ընթացքում (1918 թ. ապրիլի 9 – մայիսի 26): Անդրկովկասյան բոները ուսումնասիրվել են մեր աշխատության մեջ[1]:

Անդրկովկասյան միասնական տարադրամի թողարկումը՝ Հարավային Կովկասի երկրների ֆինանսական միասնականության հաստատման առաջին փորձն էր:

1918 թ. մայիսի 26-ին սեյմն ընդունեց իր վերջին որոշումը Անդրկովկասյան Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության ինքնալուծարման վերաբերյալ[2]: Նույն օրն էլ հռչակվեց Վրաստանի անկախությունը, քիչ ուշ՝ Հայաստանի և Ադրբեջանի անկախությունը:

Հատկանշական է, որ Վրաստանի Ազդային խորհրդի նախագահ Նոե Ժորդանիան 1918 թ. մայիսի 25-ին մշակել էր այն հարցերը, որոնք խորհուրդը պետք է քննարկեր և հաստատեր մայիսի 26-ին: Հինգ հարցերից

---

1 Նիկո Ջավախիշվիլի. Վրաց բոնիստիկա. Թբիլիսի, 1996, էջ 12–35 (վր.):

2 Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии. Тифлис, 1919, с. 330.

երկրորդը՝ ֆինանսական համակարգի վերաբերյալ հարցն էր: Հավանական էր, որ ազգային ֆինանսական համակարգի ձևավորումից առաջ, հին համակարգը ժամանակավորապես կպահպանվեր և այդ ժամանակամիջոցում Հայաստանն ու Ադրբեջանը Վրաստանի ֆինանսական հիմնարկություններում կունենային իրենց ներկայացուցիչները[3]:

Մայիսի 26-ին Վրաստանի Ազգային խորհուրդը միաձայն որոշում ընդունեց Անդրկովկասի միասնական ֆինանսական համակարգի պահպանման վերաբերյալ[4]:

Վրաստանի կառավարությունը (նախագահ Նոե Ռամիշվիլի) անկախության հռչակման երկրորդ օրն արդեն սկսեց բանակցություններ վարել Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների հետ, որպեսզի պահպանվի Անդրկովկասի միասնական ֆինանսական համակարգը:

Հատկանշական է, որ Անդրկովկասի միասնական դրամական համակարգի պահպանման հարցը Վրաստանի Ազգային խորհրդում շատ հակառակորդներ ուներ:

1918 թ. հուլիսի 19-ին տեղի ունեցավ Վրաստանի Ազգային խորհրդի (այն կատարում էր խորհրդարանի դեր) հերթական նիստը, որտեղ, այլ հարցերի թվում, քննարկեց նաև Անդրկովկասյան կոմիսարիատի բոնների թողարկումը շարունակելու հարցը: Կայացավ սուր բանավեճ, որին մասնակցում էին Գ. Ժուրուլին (ֆինանսների նախարար), Ս. Մդիվանին (սոցիալ-ֆեդերալիստ), Ի. Մաճավարիանին (ազգային դեմոկրատ) և Ի. Ծերեթելին (սոցիալ-դեմոկրատ):

Գ. Ժուրուլին իր ելույթում նշեց ֆինանսական հարցերի վիթխարի նշանակությունը պետության համար և խորհրդին տեղեկացրեց Անդրկովկասյան կոմիսարիատի բոնների թողարկումը շարունակելու հարցով Հայաստանի և Ադրբեջանի հետ տարվող բանակցությունների արդյունքների մասին: Նա հայտարարեց. «Մենք ստիպված էինք Անդրկովկասի անունից բոներ տպագրել: Դրա համար անհրաժեշտ էր համաձայնություն Հայաստանի և Ադրբեջանի հետ: Ադրբեջանը համաձայնություն չի տալիս, նա խնդրում է բաժանել ընդհանուր գույքը և դրանից հետո բոներ թողարկել: Մենք պատասխանեցինք, որ Ռուսաստանի առջև այն գույքի համար, որն մնաց այստեղ՝ գահանիստ քաղաքում, պատասխանատու է Վրաստանը: Միաժամանակ, մենք տեղյակ չենք, թե որքա՞ն գույք է մնացել Ադրբեջանում և այլուր: Դրա համար գույքի տերը և պատասխանատուն դեռևս միայն մենք ենք: Չնայած մեր նման հայտարարության, բայց և այնպես Հայաստանի հետ համաձայնություն կայացավ: Նա ներկայացրեց 80 մլն ռուբլու պահանջարկ, իսկ մենք՝ 120 մլն, քանզի մենք պետք է իրականացնենք ռուսական հիմնարկների լուծարումը և դրա համար մեծ գումարներ են պահանջվում: Այսպիսով, բոների թողարկման վերաբերյալ կառավարության օրինագիծը հետևյալն է. մինչև տեղի կունենա ընդհանուր գույքի հստակեցումն ու բաժանումը, Անդրկովկասի կողմից թողարկած 300 մլն պատասխանատվությունը, համապատասխան համաձայնագրով,

---

3 Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 1836, ց. 1, գ. 49, թ. 3(վր.):

4 «Սաքարթվելոս ռեսպուբլիկա» թերթ, Թբիլիսի, 26 մայիսի 1919 (վր.):

դրվում է Վրաստանի և Հայաստանի վրա: Տպագրվելու են 200 մլն ռուբլու նոր բոներ, որից 80 մլն տրվելու է Հայաստանին, իսկ 120 մլն՝ Վրաստանին: Համաձայնագրով պատասխանատվությունը դրվելու է այս երկու պետությունների վրա»[5]:

Ազգային խորհրդի ընդդիմության անդամներ Ա. Մգիվանին և Ի. Մաճավարիանին բացասական գնահատական տվեցին կառավարության օրինագծին և պահանջեցին, որ այն անվերապահորեն անցնի սեփական դրամական համակարգին կամ անդրկովկասյան բոների դրոշմումը չարունակի միայն Վրաստանի պահանջների բավարարման համար: Ի. Մաճավարիանին կասկած հայտնեց, որ Հայաստանը, որի պետական կողմնորոշումը չի համապատասխանում մեր կողմնորոշմանը, իրեն տրված գումարը՝ 80 մլն ռուբլին, կօգտագործի ընդդեմ Վրաստանի՞:

Ընդդիմության արտահայտած կարծիքը կտրուկ հերքեց վրաց սոցիալ-դեմոկրատների լիդերներից մեկը՝ Իրակլի Ծերեթելին: Նա հայտարարեց, որ Վրաստանի կառավարության կողմից անդրկովկասյան բոների տպագրման իրավունքի բռնատիրումը միանշանակորեն ոչ բարվոք միջազգային արձագանք կառաջացնի: Նա պնդում էր, որ Հայաստանի կառավարությունը, եթե նույնիսկ Վրաստանի դեմ 80-ի փոխարեն օգտագործի 200 մլն ռուբլի, «մեկ տասներորդն էլ չի փոխհատուցի այն կորստին, որքան մեկ իրական փաստը, որը հակառակորդներին կընձեռի իրատեսական հիմք մեր հանրապետության դեմ հանդես գալու համար: Օտարերկրյա պետությունները կասեն, որ փոքր պետությունը մյուսի իրավունքները խախտելով է սկսում իր գոյությունը: Գիտե՞ք, արդյոք, որ դա վիթխարի նշանակություն կունենա... Մենք պետք է ուշադրությունը կենտրոնացնենք ոչ թե այն բանի վրա, որ այդ դրամը կգտնվի դաշնակների կուսակցության տնօրինության ներքո և այլն, այլ մեր տեսադաշտում պետք է ունենանք բարոյական պատասխանատվությունը: Ներկայիս բոների վրա ստորագրում է Հայաստանի կառավարության ներկայացուցիչը (նկատի ունի Ք. Կարճիկյանին – Ն. Ջ.), և եթե Հայաստանը լինի մեզ հետ, այնժամ աշխարհը կտեսնի, որ մենք անաբդարացի չենք վարվել և այդժամ իրատեսորեն Ադրբեջանն էլ կդառնա դրա պատասխանատուն»[7]:

Ի վերջո, Վրաստանի Ազգային խորհուրդը 1918 թ. հուլիսի 23-ին ընդունեց «Անդրկովկասյան կոմիսարիատի 300 միլիոն ռուբլու բոների պատասխանատվության և 200 մլն ռուբլու բոնի նոր տպագրման մասին օրենք»[8]: Այդ օրենքին համապատասխան, 1918 թ. հունվարի 29-ից մայիսի 26-ը Անդրկովկասյան կոմիսարիատի թողարկած ընդհանուր առմամբ 300 մլն ռուբլու բոների պարտքը դրվում է Անդրկովկասի երեք հանրապետությունների վրա: Մինչև յուրաքանչյուրին բաժին ընկնող պարտքի կոնկրետացումը, որոշում ընդունվեց 200 մլն ռուբլու բոների պատասխանատվությունը, արտակարգ համաձայնագրով, դնել Վրաստանի և Հայաս-

5 «Էրթոբա» թերթ, Թբիլիսի, 21 հուլիսի 1918 (վր.):
6 Նույն տեղում:
7 Նույն տեղում:
8 «Սաքարթվելոս ռեսպուբլիկա», 26 հուլիսի 1918 (վր.):

տանի վրա: Բացի այդ, պետք է տպագրվի 200 մլն ռուբլու բոն, որից 120 մլն բաժին է ընկնելու Վրաստանին, իսկ 80 մլն Հայաստանին[9]:

Վրաստանի և Հայաստանի միջև վերոնշյալ համաձայնագրի կնքումը և Հայաստանին 80 մլն ռուբլու բոնի հանձնումը, ինչպես գնահատեց այն ժամանակվա հասարակության որոշակի հատվածը, «ավելի շուտ Վրաստանի կառավարության ասպետական քայլն էր, քան ֆինանսական մերկանտիլիզմով պայմանավորված անհրաժեշտություն»[10]:

1918 թ. հուլիսի վերջերին անդրկովկասյան երեք հանրապետությունների ներկայացուցիչները համաձայնեցին, որ մինչև սեփական դրամական միավորի ընդունումը, պետք է պահպանվի անդրկովկասյան միասնական բոնը, իսկ որպես հանձնարարական պետք է իրականացնեն ֆինանսատնտեսական հետևյալ միջոցառումները.

1. Անդրկովկասյան կոմիսարիատի բոնի ծրագրավորված, նպատակամղված թողարկումը և պերճանքի առարկաների ներբերումն արտասահմանից խստորեն պետք է սահմանափակել:

2. Թույլ չտալ կապիտալի արտահոսք արտասահման:

3. Պետք է առավելագույնս սահմանափակել Ռուսաստանի «Պետական վարկատոմսերի» գործունեությունը Անդրկովկասում և միջոցներ ձեռնարկել շրջանառությունից դրանց աստիճանական դուրսբերման ուղղությամբ:

4. Անդրկովկասից արտասահման ապրանքի դուրսկրումը կամ դրա դիմաց ապրանքի ներկրումը պետք է հավասարեցվի կամ արտահանած ապրանքի դիմաց ստացված տարադրամը պետք է հանձնվի պետությանը:

5. Օտարերկրյա տարադրամի առուծախի մենաշնորհը պետք է տրվի միայն պետական հիմնարկներին, իսկ դրա կուրսի շրջանակները Անդրկովկասի բոնի նկատմամբ պետք է հաստատվի երեք հանրապետությունների համաձայնության հիման վրա[11]:

Շրջանառության մեջ Անդրկովկասյան կոմիսարիատի բոնների պահպանումը և դրանց տպագրման շարունակումը այն ժամանակ, երբ Անդրկովկասը որպես միասնական պետություն գոյություն չուներ, պայմանավորված էր բազում հանգամանքներով: Այդ երևույթն ի հայտ բերեց ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր: Անդրկովկասյան բոնը բաղում առավելություններ ուներ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի դրամական միավորների նկատմամբ: Մասնավորապես.

1. Այն տարածման շատ ավելի մեծ տարածք ուներ, քան կարող էր ունենալ առանձին հանրապետության դրամական միավորը:

2. Ժողովուրդը արդեն հարմարվել էր դրան և առանց երկմտելու այն կիրառում էր Անդրկովկասում և երբեմն էլ նրա սահմաններից դուրս (կոնկրետ Բաթումիում, որն այն ժամանակ զավթված էր Թուրքիայի կողմից և Հյուսիսային Կովկասում), որը վերոնշյալ դրամական միավորի շրջանառության շրջանակները անհամեմատելիորեն մեծացնում էր:

---

9 Նույն տեղում:

10 «Սախալիո սաքմե» թերթ, Թբիլիսի, 4 օգոստոսի 1918 (վր.):

11 Կ. Կ ա ն դ ե լ ա կ ի. Վրաստանի ազգային տնտեսությունը. գիրք երկրորդ. Փարիզ, 1960, էջ 67 (վր.):

3. Այն նպաստում էր արտասահմանյան երկրների հետ առևտրատնտեսական կապերի ընդլայնմանը:

Այսպիսով, Անդրկովկասի միասնական ֆինանսական համակարգի ժամանակավոր պահպանումը պայմանավորված էր դրա անհրաժեշտությամբ: Վրացական, հայկական և ադրբեջանական դրամական միավորներն ընդունելուց առաջ Անդրկովկասյան կոմիսարիատի բոնը համընդունելի դրամի դեր էր կատարելու:

Հատկանշական է, որ դրեթե նույնատիպ իրավիճակ էր նաև Լեհաստանում, Ավստրիայում, Լիտվայում, Լատվիայում, Էստոնիայում և այլ երկրներում, որտեղ անկախության հռչակումից հետո, մինչև սեփական դրամական համակարգի ձևավորումը, ոչ ազգային տարադրամը կամ տեղական բոնը բավականին ժամանակ գտնվում էին շրջանառության մեջ:

Անդրկովկասյան կոմիսարիատի բոնների էմիսիան իրականացվում էր Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի լիազոր առաքելությունների հատուկ որոշումների հիման վրա, որոնք վավերացվում էին այդ հանրապետությունների կառավարությունների կողմից: Երբեմն տեղ էին գտնում երկկողմ համաձայնություններ երկու հանրապետությունների, մասնավորապես, Վրաստանի և Հայաստանի կամ Վրաստանի և Ադրբեջանի միջև, որին հետագայում միանում էր նաև երրորդ հանրապետությունը:

Ինչպես արդեն նշեցինք, հանրապետությունների միջև ֆինանսական հարցերով առաջին համաձայնությունը կայացավ 1918 թ. հուլիսին: Մինչև այդ տպագրվել էր բոների այն քանակությունը, որի թողարկումը Անդրկովկասյան Ժողովրդավարական Դաշնային Հանրապետությունը իր որոշման շրջանակներում չհասցրեց:

Հանրապետությունների միջև համաձայնության հիման վրա, 1918 թ. հուլիսից մինչև 1919 թ. հուլիսը, իրականացվեց Անդրկովկասյան կոմիսարիատի բոնի հինգ էմիսիա: 1918 թ. հուլիսի 20-ին պայմանավորվեցին տպագրել 280 մլն ռուբլու, 1918 թ. նոյեմբերի 15-ին՝ 160 մլն ռուբլու, 1919 թ. փետրվարի 12-ին՝ 320 մլն ռուբլու, 1919 թ. մայիսի 7-ին՝ 200 մլն ռուբլու, իսկ 1919 թ. հունիսի 4-ին՝ 100 մլն ռուբլու բոներ[12]:

Հինգ էմիսիայից հետո Անդրկովկասյան կոմիսարիատի բոների ընդհանուր գումարը կազմեց 1 մլրդ 60 մլն ռուբլի: Եթե այդ ընդհանուր գումարին ավելացնենք Անդրկովկասյան կոմիսարիատի թողարկած բոների ընդհանուր ծավալը՝ 300 մլն ռուբլին (այստեղից 100 մլն՝ անմիջականորեն Անդրկովկասյան կոմիսարիատի կողմից, իսկ 200 մլն՝ Անդրկովկասյան Ժողովրդավարական Դաշնային Հանրապետության կողմից), ապա արդյունքում կստանանք 1 մլրդ 360 մլն ռուբլի: Այդ գումարից Վրաստանին է տրվել 540 մլն ռուբլի, իսկ Հայաստանին և Ադրբեջանին՝ 820 մլն:

Հատկանշական է, որ եթե առաջին էմիսիան իրականացվեց հանրապետությունների միջև համեմատական փոխըմբռնման պայմաններում, ապա հետագայում իրավիճակը տրամագծորեն փոխվեց: Դա պայմանավորված էր Ադրբեջանի կառավարության գործունեությամբ: Մասնավորապես, Ադրբեջանի կառավարությունը գրավեց Բաքուն, որն Անդրկովկասյան կոմիսարիատի բոների առաջին էմիսիայի ժամանակ գտնվում էր բոլշևիկնե-

12 Նույն տեղում:

րի տնօրինության ներքո, յուրացրեց բոլշևիկների կողմից տեղադրված թղթադրամների դրոշման սարքավորումը (որտեղ հատվում էին Բաքվի քաղաքային ինքնակառավարման թղթադրամները) և, առանց Հայաստանի ու Վրաստանի համաձայնության, սկսեց տպել իր սեփական դրամական միավորը:

«Հետայսու անդրկովկասյան բոների էմիսիայի շարունակության վրա,– գրում էր այն ժամանակվա ֆինանսների նախարար Կ. Կանդելակին,– Ադրբեջանի ներկայացուցիչները բոլոր տեսակի արգելքներ կհարուցեն: Դրամի բաշխման երեքի համար ընդունելի ղեկավար սկզբունքներ չընդունվեցին: Ո՛չ տարածքը և ո՛չ էլ բնակչության թվաքանակությունը, ո՛չ հանձնելիք-ստանալիքի կամ ապրանքի արտահանման և ներբերման ընդհանուր չափանիշ ոչինչ ընդունված չէր: Էմիսիաներից յուրաքանչյուրը մեծ դժվարություններով իրականացվում էր միայն երեք հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդաժողովում»[13]:

Ժամանակի ընթացքում վերոնշյալ հարցը ավելի ու ավելի սուր բնույթ էր ստանում և անդրկովկասյան միասնական ֆինանսական համակարգի պահպանումը աստիճանաբար անհնարին էր դառնում:

Այսպիսով, չնայած անդրկովկասյան ֆինանսական միասնական համակարգի ընձեռնելիք ակնհայտ առավելություններին, նշյալ իրավիճակը անկախ հանրապետություններին բացահայտորեն թելադրում էր դրամավարկային ոլորտում գրավել անկախ դիրքորոշում և, բնականաբար, նման իրավիճակը չէր կարող հարատևել: Բացի այդ, թեկուզ և բոների տեսքով, վրացական տարադրամի թողարկման կողմնակիցների թիվը Ազգային խորհրդում (այն 1918 թ. հոկտեմբերի 8-ից կոչվում էր Վրաստանի խորհրդարան) օրեցօր աճում էր:

1918 թ. դեկտեմբերին Հայաստանի և Վրաստանի զինված ուժերի միջև ռազմական ընդհարում տեղի ունեցավ: Մինչ այդ իր նմանը չունեցող այդ փաստը ամոթալի հետք թողեց պատմականորեն եղբայր հայ և վրաց ժողովուրդների պատմության մեջ: Բարեբախտաբար, պատերազմական այդ դրությունը չձգձգվեց:

Հատկանշական է, որ լրիվ հնարավորություն ունենալով, Վրաստանի կառավարությունը Անդրկովկասյան կոմիսարիատի բոների էմիսիայի իրավունքի բռնատիրում չիրականացրեց և թղթադրամների թողարկման սարքավորումը չօգտագործեց ռազմական իր ծախսերի փոխհատուցման համար: Նա փորձեց բնակչության շրջանում կուտակված կանխիկ դրամի ծավալն իր կողմը քաշել պետական ներքին վարկի պարտատոմսերի թողարկման միջոցով:

1918 թ. դեկտեմբերի 24-ին Վրաստանի խորհրդարանը պետական գանձատան կարճաժամկետ, 5%-անոց պարտատոմսերի թողարկման վերաբերյալ օրենք ընդունեց[14]:

Հատկանշական է, որ պետական գանձատան պարտատոմսերի թողարկումը հնարավորություն չտվեց հավաքել շրջանառության մեջ գտնվող

---

13 *Նույն տեղում, էջ 66–67:*

14 *«Սաքարթվելոս ռեսպուբլիկա», 29 դեկտեմբերի 1918 (վր.):*

կանխիկ փողի ծավալը, քանզի Վրաստանի բնակչությունը այդ հարցում պասսիվ դիրք դրավեց:

1919 թ. հունվարի 9–17-ը Թբիլիսիում Վրաստանի և Հայաստանի կառավարությունների լիազորների խորհրդաժողով կայացավ, որին մասնակցում էին նաև դաշնակից հրամանատարության ներկայացուցիչները: Այն նախագահում էր Մեծ Բրիտանիայի բանակի գնդապետ Ռ. Ն. Ստյուարտը: Խորհրդաժողովի գլխավոր նպատակը Վրաստանի և Հայաստանի միջև առկա վիճելի հարցերի և ապագա հարաբերությունների կարգավորումն էր: Խորհրդաժողովի ընդունած «Ֆինանսական հարցեր»-ի կետերից մեկում նշված էր, որ.

«ա. Հայաստանին հանձնվում է 80 մլն բոն, որը հավասար է Վրաստանի և Ադրբեջանի առանձին-առանձին վերցրած գումարին այն համաձայնագրի հիման վրա, որը նրանց միջև կնքվել էր 1918 թ. նոյեմբերի 15-ին:

բ. Թողարկվելու է անդրկովկասյան բոնների չորրորդ սերիան, որի ծավալը կորոշվի փոխհամաձայնությամբ և որի մասին կտեղեկացվի դաշնակիցների առաքելությանը: Այդ սերիան թողարկվելու է Հայաստանին տրվելիք բոնների հետ միաժամանակ»[15]:

1919 թ. խորհրդարանում ավելացավ Վրաստանի բոներին անցնելու կողմնակիցների թիվը: Չնայած դրան, կառավարությունը բազում պատճառների հետևանքով, գերադասեց վերոնշյալ քայլից խուսափել մինչև 1919 թ. ամառը: Այդ հարցը հասունացավ միայն 1919 թ. հուլիսին:

1919 թ. հուլիսի 8-ին կայացած Վրաստանի հիմնադիր ժողովի 34-րդ նիստում սոցիալ-դեմոկրատական խմբակցության անդամ Դավիթ Օնիաշվիլին փորձեց հիմնավորել Վրաստանի բոների թողարկման անհրաժեշտությունը: Դա հանգեցրեց սոցիալ-դեմոկրատական կուսակցության տպագիր մարմին «Էրեթոբա» թերթում հուլիսի 10-ին «Վրաստանի բոներ» հոդվածի հրապարակմանը: Դրանում շարադրված էր այն աղետալի իրավիճակը, որը պայմանավորեց Վրաստանի բոների թողարկման արագացումը: Վրաց սոցիալ-դեմոկրատները կարծես իրենց արդարացնում էին սեփական դրամական միավորին անցնելու առթիվ: «Եթե Ադրբեջանը և Հայաստանը բոների թողարկման գործում նույնչափ շահագրգռված լինեին, որքան մեր հանրապետությունը,– նշում էին նրանք,– ապա անտարակույս, կառավարող կուսակցությունը այսօր էլ կգերադասեր անդրկովկասյան բոները... Սակայն այս տարի իրավիճակը փոխվեց: Ադրբեջանը, որը դեռ անցյալ տարի զգալի տատանումից հետո համաձայնեց ընդհանուր բոների սահմանափակ քանակության թողարկմանը, այս տարի կտրուկ հրաժարվում է: Վրաստանի հանրապետությունը ստիպված է անձամբ հոդ տանելու դրամանիշերի թողարկման հարցում, քանզի այլ ելք չունի»:

1919 թ. հուլիսի 11-ին հիմնադիր ժողովի 35-րդ նիստը ընդունեց №101 դեկրետը «Վրաստանի հանրապետության բոների թողարկման մասին»: Դրանով ավարտվեց անդրկովկասյան միասնական ֆինանսական համակարգի դոյությունը:

Եթե անդրկովկասյան միասնական ֆինանսական համակարգի լուծարումը Վրաստանի համար համեմատարար նվազ ցավագին էր, ապա այդ

15 Նույն տեղում, 28 հունվարի 1919 (վր.):

երևույթը ծանր դրության մեջ դրեց Ադրբեջանին, որի տարադրամի կուրսի անկումը արագացավ և առանձնապես Հայաստանին, որը, սեփական դրամական միավորի տպագրման սարքավորումների բացակայության պատճառով, ստիպված եղավ որոշակի ժամանակի ընթացքում դրամի փոխարեն շրջանառության մեջ գործածել Ռուսաստանի նախկին կայսերական բանկի Երևանի բաժանմունքի բանկային չեկերը:

Այսպիսով, 1918 թ. հունվարի 29-ից 1919 թ. հուլիսի 11-ը գոյություն ուներ անդրկովկասյան միասնական դրամական համակարգ: 1918 թ. հունվարի 29-ից մայիսի 26-ը ընդհանուր թղթադրամներ էին թողարկում Անդրկովկասյան կոմիսարիատը և Անդրկովկասյան Ժողովրդավարական Դաշնային Հանրապետությունը, իսկ 1918 թ. մայիսի 26-ից 1919 թ. հուլիսի 11-ը դրանք տպագրվում էին անդրկովկասյան հանրապետությունների միջև ֆինանսական համաձայնագրի հիման վրա: Այդ ժամանակի ընթացքում ֆինանսական համաձայնագիրը անդրկովկասյան հանրապետությունների համար հիմնականում դրական նշանակություն ունեցավ:

ФИНАНСОВЫЕ СОГЛАШЕНИЯ МЕЖДУ РЕСПУБЛИКАМИ ЗАКАВКАЗЬЯ (1918 – 1919 гг.)

НИКО ДЖАВАХИШВИЛИ (Тбилиси)

Резюме

В связи с дефицитом наличных денежных знаков, 29 января 1918 г. Закавказский комиссариат принял решение о выпуске собственных денежных знаков. Это было первой попыткой финансовой унификации закавказских стран. Выпуск бонов комиссариата продолжался и в период существования Закавказских независимых федеративных республик. В июле 1918 г. правительства независимых государств договорились, что перед тем, как выпускать собственные денежные единицы, надо сохранить единый денежный знак. В период с июля 1918 г. по июль 1919 г. на основе межреспубликанского соглашения пять раз проводилась эмиссия бонов правительства Закавказского комиссариата.